Սոյն հաշիւը մանրամասնաբար քննելով հոգաբարձութիւնը․ հիմնուելով բերած վկայութիւնների և ստորագրութիւնների վերայ ըստ ամենայնի ճիշտ և անսխալ գտնելով ընդունեց․

Նախագահ հոգաբարձութեան՝ Թադէոս աւագ քահանայ Խոսրովեանց
Անդամ հոգաբարձութեան և գանձապահ՝ Մկրտիչ Կամիւնիկեանց

---

## ՀԱՇԻՒ

Ելից և մտից դրամոց եկեղեցական—ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր—Բայազէտ քաղաքի վասն $18^{89}/_{90}$ ուսում․ տարւոյ:

### ՄՈՒՏՔ

Սկսեալ է 22 Յուլիս 1889 թ․ ց 9-ն Օգոստոսի 1889 թուի:

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Անցեալ 188⁸/₉ ուսում․ տար․ աւելացած գումարը | 85 | 98 |
| Աշակերտների և աշակերտուհիների թօշակը | 781 | |
| Ուսումնարանապատկան կրպակների վարձը | 300 | |
| Դրամագլխի տոկոսը | 108 | |
| Մոմավաճառութեան կապալագրամը | 646 | 66 |
| Պսակատէրերից նուէրներ | 326 | 80 |
| Ս․ Աստուածածին եկեղեցու արդիւնքից | 50 | |
| Նոյնը և Ս․ Կարապետ եկեղեցեաց մասանց տանից | 97 | 95 |
| Թատրոնական ներկայացումներից և պարահանդէսից | 95 | 91 |
| Նուէրներ մանր մուտք | 63 | 72 |
| Գումար | 2556 | 2 |

### ԵԼՔ

| | | |
|---|---|---|
| Հինգ ուսուցչի և 1 վարժուհու ռոճիկ | 1905 | |
| Ծառաներին վարձ | 127 | |
| Շինութեան վրայ | 106 | 73 |
| Նստարաններ, սեղաններ, աթոռներ, գրքեր և բլանկներ | 131 | 20 |
| Վառելիքի | 77 | 73 |
| Ձեռագործի նիւթեղէն և մանրածախք | 121 | 97 |

| | | |
|---|---|---|
| Կալուածների 1889 Թ. հարկ . . . . . . . | 19 | 60 |
| Տէր Վահան Վաչէեանցին ճանապարհածախք . . | 20 | |
| Յատկացրած է դրամագլխի հաշուին . . . . . | 25 | |
| Գումար | 2534 | 23 |

## ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱԳԼԽԻ

Եկեղեցական—ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր—Բայեազիդ քաղաքի վասն $18^{89}/_{90}$ ուսումնական տար.

Ուսումնարանապատկան դրամագլխի գումարն է երկու հազար ինն հարիւր քառասուն ռուբլի (2940)։

Սրանից վերկալած է տղայոց Ս. Մեսրովբեան ուսումնարանի շինութեան վրայ ծախսելու երեք հարիւր եօթանասուն և եօթ ր. (377ր.)

Այս գումարը գրուած է մուտք ի 30 Օգոստոսի 1888 Թուի № 78.

Անցեալ $188^{8}/_{9}$ ուսում. տար. ընթացքում դարձեալ վերկալած և ծախսած ուսումնարանի վրայ երեք հարիւր ութսուն և ութ ր. (388 ր.)

Այս գումարը գրուած է մուտք ի 20 Յուլիսի 1889 Թուի № 54.

Ներկայ $18^{89}/_{90}$ Թւի աւելացած մուտքից յատկացրած է դրամագլխի հաշուին պահելու համար քսան և հինգ ռուբլի (25 ր.)

Դրամագլխի մնացած գումարը երկու հազար երկու հարիւր ռուբլի (2200 ր.) տրուած է տոկոսով մուրհակագրերով զանազան անձինքների, բացի մէկ հարիւր եօթանասուն և հինգ ռուբլուց (175 ր.) որը պահվում է տեղիս արքունի գանձարանի խնայողական կասսայում։

Ընդ իսկականին ուղիղ է ստորագրել են

Նախագահ հոգաբարձութեան Եղիազար քահանայ Տէր Միքայէլեանց
Անդամք հոգաբարձութեան Կարապետ Զիրուխչեանց
Ս. Բաբեկ
Զ. Ադամեանց

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

### ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 6 Յունիսի ընդ համա-